«Ճապոնիա-Հայաստան տարածական հետազոտությունների և քաղաքային ինֆորմատիկայի կենտրոն»-ի բացման արարողությունը և միջազգային սեմինարը

Սեպտեմբերի 11-ին դեսպան Առկին մասնակցեց Հայաստանի ու Ճապոնիայի համատեղ ակադեմիական հետազոտական ծրագրի՝ «Տարածական հետազոտությունների և քաղաքային ինֆորմատիկայի կենտրոնի» բացման արարողությանը:

Արարողությանը ելույթ ունեցան Երևանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Հովհաննիսյանը և դեսպան Առկին, որին հաջորդեցին Տոկիոյի համալսարանի տարածական տեղեկատվության գիտության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Յոշիհիդե Սեկիմոտոյի և Տոկիոյի համալսարանի տարածական տեղեկատվության գիտության կենտրոնի դոցենտ Կոտարո Իիզուկայի զեկույցները: